REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 130
20 հունիսի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի հունիս ամսվա ընթացքում Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճեները. / թիվ 48-Ա, 49-Ա , 50-Ա, 51-Ա, 52-Ա , 53-Ա, 54-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2017 թվական N 48-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Աննա Վասիլյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 8-րդ փողոցի թիվ 10/2 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Աննա Վասիլյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2017թ.հունիսի 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունիսի 2017 թվական N 49 -Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1 ին մասի 3 րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 6 ի N 24 Ն որոշումը, *որոշում եմ*.

1.ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնված բացահանքից օգտակար համածոնների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնված բացահանքից օգտակար համածոնների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Գոհար Միսակյանին :
4. Մայակովսկի համայնքապետարանի առաջատար մասնագետ, Գոհար Միսակյանին՝
1) համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնված բացահանքից օգտակար համածոնների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Գոհար Միսակյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 12

Հավելված

Մայակովսկի համայնքի ղեկավարի

2017 թվականի հունիսի 12-ի N 49 –Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Մայակովսկի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2017 թվականի հունիսի 13-ից մինչև հունիսի 23-ը ներառյալ կազմակերպվող Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնված բացահանքից օգտակար հանածոնների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնված բացահանքից օգտակար հանածոնների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների վերաբերյալ կարող են մինչև 2017 թվականի հունիսի 23-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքերում (mayakovski-kotayq.am/հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով (mayakovski.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Մայակովսկի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում 2017 թվականի հունիսի 23-ին ժամը 17:00-ին Մայակովսկի 1-ին փողոց, թիվ 8/1 հասցեում գտնվող Մայակովսկի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2017 թվականի հունիսի 19-ը ներառյալ ներկայացնել դիմում/ դիմումի ձևը կստանաք տեղում/:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել

060 28 50 13 *հեռախոսահամարով :*

Մայակովսկի համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար Վ. Փայտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք. գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2017թվական N 50 Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7 րդ հոդվածի 8-րդ մասի 3 րդ կետի դրույթներով , << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 42 րդ հոդվածի առաջին մասի 6 րդ կետով ,«Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվաով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19 ի թիվ 596 Ն որոշմամբ հաստատված կարգով՝ ***որոշում եմ***.

1.Քաղաքացի Ռոբերտ Յագիչյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.56081 հեկտար / ծածկագիր .07-043-0128-0256, 07-043-0128-0260,07-043-0128-0258,07-043-0128-0273 / հողամասերից 0.141083 հեկտարի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի :

2. Քաղաքացի Ռոբերտ Յագիչյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող 0.141083 հեկտար հողամասերի վրա տալ անասնապահական տնտեսության կառուցման շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքները կատարել համաձայն նախագծային աշխատանքների:

3. Պարտավորեցնել Ռոբերտ Յագիչյանին .
շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N 5 ձևի. մուծելու սահմանված տեղական տուրքը:

4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի ապրիլի 21-ի «Շինարարության թույլտվություն տալու և հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասի » N 30-Ա որոշումը:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2017թվական N 51-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, *որոշում եմ.*

1. Քաղաքացի Արթուր Գևորգյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 15-րդ փողոցի թիվ 18 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2017 թվական N 52 Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 րդ հոդվածի 1 ին մասի 2 րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Աստղիկ Հարությունյանի և Լյովա Մկրտչյանի դիմումները օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը.

որոշում եմ՝

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն
   Աստղիկ Հարությունյանին 70 000 / յոթանասուն հազար/ դրամ.
   Լյովա Մկրտչյանին 30 000 / երեսուն հազար / դրամ .
   Ընդամենը 100 000 / հարյուր հազար / դրամ :
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
   Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 19 » հունիսի 2017 թվական N 53-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Անահիտ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը՝

որոշում եմ.

1. «Անահիտ Հովհաննիսյան» Ա/Ձ-ին համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2017 թվականի երկրորդ եռամսյակի համար ,տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 19 » հունիսի 2017 թվական N 54-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Ռիմա Պետրոսյանի կողմից ներկայացված հայտը՝

որոշում եմ.

1. « Ռիմա Պետրոսյան » Ա/Ձ-ին համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2017 թվականի երկրորդ եռամսյակի համար ,տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի 19